

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	17
7. ԱՄՓՈՓՈՒՄ	17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Թեև ընթացիկ տարվա սկզբում տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) ուներ ցածր և նվազող տեմպ՝ պայմանավորված նախորդ տարիների բարձր աճ ապահովող գործոնների աստիճանաբար չեզոքացմամբ, տարվա երկրորդ կեսին ՏԱՑ-ի տեմպերը սկսել են արագանալ՝ կապված արդյունաբերության որոշակի վերականգնմամբ: Այսպես, հոկտեմբերին ՏԱՑ-ը կազմել է 10.1%, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների կուտակային ցուցանիշը կազմել է 8.1%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ արագանալով 0.4 տոկոսային կետով:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹



2025թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճին շարունակում է ամենամեծ նպաստումն ունենալ ծառայությունների աճը՝ շուրջ 2.6 տոկոսային կետով: Առևտրի և շինարարության ոլորտները նույնպես դրական նպաստում են ունեցել ՏԱՑ-ին՝ համապատասխանաբար 1.4 և 1.0 տոկոսային կետով:


¹ ՏԱՑ-ի նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2025թ. հունվար-հոկտեմբերին, տոկոսային կես



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտի աճի տեմպերը շարունակում են զգալիորեն արագանալ: 2025թ. հոկտեմբերին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 17.9% աճ՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 7.8 տոկոսային կեսով: Կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշը դեռևս մնում է բացասական՝ կազմելով -3.0%, թեև այն ունի բավական արագ մեղմման միտում (նախորդ ամսվա համեմատ անկման տեմպը մեղմվել է 2.7 տոկոսային կեսով):

Արդյունաբերության անկումը 2025թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին² հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 10.2% անկմամբ, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության անկմանը կազմել է 7.2 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում նույնպես գրանցվել է անկում, որի չափը կազմել է 0.5% և ընդհանուր արդյունաբերության անկմանը նպաստել է 0.1 տոկոսային կետով: Արդյունաբերությանը դրական նպաստում է ունեցել «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաօլորտը՝ 1.5 տոկոսային կետով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաօլորտի նպաստումը շարունակել է լինել գրեթե զրոյական:


Մշակող արդյունաբերության ոլորտում, թեև կուտակային՝ հունվար-սեպտեմբերին էական անկում է գրանցել, սակայն վերջին ամիսների զարգացումները զգալի դրական են, ինչն արտահայտվում է ամսական աճի տեմպերի կտրուկ արագացմամբ: Այսպես, մշակող արդյունաբերության աճը սեպտեմբերին, նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ, կազմել է 12.1%՝ օգոստոսի ցուցանիշի համեմատ արագանալով 4.8 տոկոսային կետով: Այդ բարձր աճը հիմնականում պայմանավորված է եղել «սննդամթերքի արտադրություն», «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» և «հիմնական մետաղների արտադրություն» ենթաօլորտների աճերով, որոնց նպաստումները մշակող արդյունաբերությանը կազմել են համապատասխանաբար 6.9, 3.4 և 2.6 տոկոսային կետ: Ընդ որում, սննդամթերքի արտադրության աճը սեպտեմբերին կազմել է 20.4%, այն դեպքում, երբ օգոստոսին այդ նույն ենթաօլորտում գրանցվել էր 4.8% անկում: Ծխախոտի արտադրության աճի տեմպը ևս էականորեն արագացել է՝ օգոստոսի 17.1%-ից սեպտեմբերին հասնելով 32.4%-ի: Փոխարենը, էականորեն դանդաղել է հիմնային մետաղների արտադրության աճի տեմպը՝ 77.1%-ից դառնալով 17.0%:

Ընդհանուր առմամբ, մշակող արդյունաբերության աճի կառուցվածքը բավական տատանողական է դարձել վերջին ամիսներին, ինչը հուշում է մեկանգամյա կարճաժամկետ գործոնների մեծ ազդեցությունների մասին: Այսինքն՝ բարձր աճերի տեմպերը կարող են նույն արագությամբ նաև դանդաղել:

² Արդյունաբերության հոկտեմբեր ամսվա տվյալները՝ ըստ ենթաօլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը մնում է բարձր մակարդակում: 2025թ. հոկտեմբերին շինարարության աճը կազմել է 20.1%՝ սեպտեմբերի համեմատ դանդաղելով 1.9 տոկոսային կետով: Հունվար-հոկտեմբեր ամիսներին շինարարության աճը կազմել է 20.6%՝ 0.1 տոկոսային կետով դանդաղելով հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշից: Այնուամենայնիվ շինարարության աճի տեմպը բավական բարձր է մնում տնտեսության մյուս հատվածների աճերի համեմատ:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %³




³ Ծառայությունների նախորդ ամիսների ամսական աճի ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից, ինչի արդյունքում փոխվել են նաև կուտակային աճի ցուցանիշները:

Ծառայությունների ոլորտի աճի տեմպը նույնպես արագացել է: Ծառայությունների ոլորտում 2025թ. հոկտեմբերին գրանցվել է 12.8% աճ՝ սեպտեմբերի համեմատ արագանալով 2.9 տոկոսային կետով: Հունվար-հոկտեմբեր ամիսների աճը կազմել է 10.8%՝ հունվար-սեպտեմբերի համեմատ արագանալով 0.2 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտի աճը, հունվար-սեպտեմբեր⁴ ամիսների տվյալներով, հիմնականում պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեության» (հիմնականում՝ բանկերի գործունեության) 13.8% աճով, որի նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին կազմել է 4.2%: Ծառայությունների աճին էական նպաստում է ունեցել նաև «տեղեկատվություն և կապ» ենթաօլորտի 18.4% աճը, որի նպաստումը կազմել է 3.2 տոկոսային կետ: Վերջինս էլ հիմնականում պայմանավորված է եղել «ծրագրային ապահովման մշակում և հարակից գործողություններ» ճյուղի 24.3% աճով: Աճին դրական նպաստում են ունեցել նաև մյուս ենթաօլորտները, բացի տրանսպորտային ծառայություններից, որտեղ շարունակել է գրանցվել անկում, որի տեմպը սեպտեմբերին կազմել է 2.8%՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 0.3 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը մնացել է ցածր մակարդակում: Առևտրի ոլորտի աճը 2025թ. հոկտեմբերին կազմել է 1.0%, իսկ կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների աճի տեմպը շարունակել է դանդաղել՝ հասնելով 3.2%-ի:

⁴ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁵

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ծավալը շարունակում է մնալ նվազ մակարդակում:

Արտահանման անկումը ընթացիկ տարվա հոկտեմբերին կազմել է շուրջ 21.8%՝ նախորդ ամսվա համեմատ մեղմվելով ընդամենը 2.0 տոկոսային կետով: Կուտակային անկման ցուցանիշը հունվար-հոկտեմբերին կազմել է 44.7%՝ հունվար-սեպտեմբերի համեմատ նույնպես բարելավվելով 2.0 տոկոսային կետով: Այնուամենայնիվ, այդ բարելավման տեմպը բավական դանդաղ է, և արտահանման ցուցանիշները շարունակում են բացասական լինել:

Արտահանման անկումը, ըստ հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշների⁶, ինչպես և ընթացիկ տարվա նախորդ ամիսներին, առավելապես պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (դա հենց ոսկու վերաարտահանումն արտացոլող ապրանքախումբն է) արտահանման շուրջ 75.3% նվազմամբ, որի նպաստումն ընդհանուր արտահանման նվազմանը կազմել է 49.3 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, արտահանման անկմանն էական բացասական նպաստում են ունեցել նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մանածագործական իրեր», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր բացասական նպաստումը կազմել է շուրջ 1.34 տոկոսային կետ:


⁵ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁶ Արտահանման հոկտեմբեր ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Արտահանմանը դրական նպաստում ունեցած ապրանքախմբերից նշանակալի է եղել «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման 27.7% աճը, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 1.8 տոկոսային կետ: Արտահանմանը նշանակալի դրական նպաստում են ունեցել նաև «հանքահումքային արտադրանք», «բուսական ծագման արտադրանք» և «սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի արտահանման ծավալների աճերը, որոնց ընդհանուր նպաստումը կազմել է 1.6 տոկոսային կետ:

Եթե արտահանման աճը ճշգրտենք «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նպաստման չափով (չեզոքացնենք վերաարտահանման ազդեցության զգալի մասը), ապա աճը կկազմի ընդամենը 2.5%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման անկման տեմպը նույնպես մնում է բավական խոր բացասական տիրույթում: 2025թ. հոկտեմբերին ներմուծումը նվազել է 11.9%-ով՝ նախորդ ամսվա համեմատ բարելավվելով 4.5 տոկոսային կետով: Բարելավման տեմպը ինչպես արտահանման դեպքում, ներմուծման դեպքում ևս դանդաղել է: Հունվար-հոկտեմբեր ամիսների ներմուծման կուտակային նվազումը կազմել է 31.2%՝ նախորդ ամսվա համեմատ բարելավվելով ընդամենը 2.0 տոկոսային կետով:

Ներմուծման անկումը, ըստ հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշների⁷, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր,

⁷ Ներմուծման հոկտեմբեր ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման շուրջ 77.5% նվազմամբ, որի բացասական նպաստումը կազմել է 37.3 տոկոսային կետ:


Ներմուծման աճին դրական նպաստում ունեցող ապրանքախմբերից առավել նշանակալի են եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի դրական նպաստումները, որոնք կազմել են համապատասխանաբար 0.8 և 0.7 տոկոսային կետ:

Եթե հաշվի չառնենք ոսկու վերաարտահանման ծավալների փոփոխության ազդեցությունները, ապա ներմուծման աճը հունվար-սեպտեմբերին կլինի դրական, սակայն բավականին ցածր՝ 3.9%-ի չափ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁸

Անվանական աշխատավարձերի աճի տեմպերը դանդաղել են նախորդ ամսվա համեմատ: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 5.3%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով)՝ կազմելով 295,042 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.1%-ով (հունվար-օգոստոսի աճը՝ 5.5%)՝ կազմելով 320,901 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է ավելի ցածր տեմպով՝ 4.8%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.1 տոկոսային կետով)՝ կազմելով 227,888 դրամ:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2024-2025թթ. հունվար-սեպտեմբերին, %



⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2025թ. հոկտեմբերին ՀՀ դրամի անվանական փոխարժեքը շարունակել է մնալ կայուն: Հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 383 դրամ՝ նախորդ ամսվա համեմատ մնալով նույն մակարդակում: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը փոքր-ինչ արժեզրկվել է՝ կազմելով 4.7 դրամ՝ նախորդ ամսվա 4.6 դրամի փոխարեն: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը հոկտեմբերին որոշակիորեն արժևորվել է՝ կազմելով միջինում 445 դրամ՝ սեպտեմբերի 449-ի համեմատ:


Եթե համեմատենք նախորդ տարվա նույն ամիսների հետ, ապա ՀՀ դրամը հունվար-հոկտեմբեր ամիսներին արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 1.2%-ով, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է՝ համապատասխանաբար շուրջ 1.9%-ով և 6.3%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպն արագացել է հոկտեմբերին, սակայն կուտակային ցուցանիշը շարունակել է դանդաղել: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը հոկտեմբերին կազմել է 13.7%՝ սեպտեմբերի համեմատ արագանալով 5.0 տոկոսային կետով, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների աճը կազմել է 14.2%՝ հունվար-սեպտեմբերի համեմատ դանդաղելով 0.1 տոկոսային կետով: Բյուջեի այլ եկամուտները (ոչ հարկային) հունվար-հոկտեմբերին աճել են 32.8%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները շարունակել են անկում գրանցել՝ 41.3%:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %




Հարկային եկամուտների աճը հունվար-հոկտեմբերին նույնպես դանդաղել է՝ կազմելով 13.7%՝ հունվար-սեպտեմբերի 13.9%-ի համեմատ: Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն (աճը՝ 21.6%), շահութահարկը (աճը՝ 19.3%) և եկամտային հարկը (աճը՝ 10.4%), որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 6.6 և 2.9-ական տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ. Հունվար-հոկտեմբեր		2025թ. Հունվար-հոկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	6.8	6.8	13.7	13.7
Ավելացված արժեքի հարկ	-1.8	-0.6	21.6	6.6
Ակցիզային հարկ	1.5	0.1	14.2	0.8
Շահութահարկ	5.6	0.9	19.3	2.9
Պետական տուրք	20.6	0.6	16.7	0.6
Մաքսատուրք	3.0	0.1	-2.9	-0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	76.8	1.9	-33.1	-1.3
Այլ հարկեր	11.6	0.4	-0.5	0.0
Շրջանառության հարկ	17.2	0.5	28.4	0.8
Եկամտային հարկ	9.2	2.5	10.4	2.9
Սոցիալական վճարումներ	14.9	0.6	13.0	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը դանդաղել է: Ընդհանուր ծախսերը 2025թ. հոկտեմբերին աճել են 11.5%-ով՝ պայմանավորված ինչպես

ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) աճերով:

Հունվար-հոկտեմբեր ամիսներին ընդհանուր ծախսերի աճը կազմել է 13.7% (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.4 տոկոսային կետով), որին ընթացիկ ծախսերի աճի նպաստումը կազմել է 7.1 (աճը՝ 8.4%), իսկ կապիտալ ծախսերինը՝ 6.4 (աճը՝ 41.3%) տոկոսային կետ (ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ընդհանուր ծախսերի աճին նպաստել են 0.1 տոկոսային կետով):

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), մլրդ դրամ



Բյուջեի պակասուրդն էականորեն աճել է: 2025թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի շուրջ 229.7 մլրդ դրամի չափով պակասուրդ՝ շուրջ 8.6%-ով (կամ 18.2 մլրդ դրամով) մեծ լինելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:


5.4. Պետական պարտք

2025թ. հոկտեմբերի վերջի դրությամբ պարտքի աճի տեմպը դանդաղել է: ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ աճել է 12.2%-ով (նախորդ ամսվա աճը՝ 13.6%)՝ կազմելով շուրջ 14.2 մլրդ ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում կառավարության պարտքն աճել է 12.7%-ով (նախորդ ամսվա աճը՝ 14.1%)՝ կազմելով 13.7 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում, կառավարության պարտքի բաղադրիչներից ներքին պարտքը (դրամական արտահայտությամբ) աճել է 13.7%-ով, իսկ արտաքին պարտքը (դոլարային արտահայտությամբ)՝ 10.2%-ով:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները ունեցել են նվազման միտում: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2025թ. հոկտեմբերին կազմել է 7.9%

Նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ 1.0 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսեր հոկտեմբերին չեն տեղաբաշխվել: Փոխարենը տեղաբաշխվել են երկարաժամկետ պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը կազմել է 10%՝ նախորդ տարվա համեմատ մնալով անփոփոխ, սակայն նախորդ տեղաբաշխման համեմատ (որը տեղի էր ունեցել ընթացիկ տարվա հուլիսին) աճելով 0.1 տոկոսային կետով:


**Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով)
12-ամսյա աճը, %**



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




Գնաճի տեմպը վերջին ամիսներին կայուն է: 2025թ. հոկտեմբերին 12-ամսյա գնաճի տեմպը կազմել է 3.7%՝ նախորդ ամսվա համեմատ մնալով նույն մակարդակում: Այն գտնվում է կենտրոնական բանկի համար սահմանված նոր՝

3±1% թիրախային միջակայքում: Այս պայմաններում, ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը վերջին ամիսներին պահպանում է անփոփոխ մակարդակում:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը պահպանվում է բարձր մակարդակում: Ավանդների ընդհանուր ծավալը 2025թ. հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 16.0%-ով՝ պայմանավորված ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 17.8% և 9.9%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2025թ. հոկտեմբերին ավանդների աճն առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 8.2 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալները նույնպես դրական են նպաստել ընդհանուր ավանդների աճին:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպի բարձր մակարդակը նույնպես պահպանվում է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2025թ. հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 26.4%-ով (նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով)՝ պայմանավորված ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի համապատասխանաբար 27.0% և 10.1% աճերով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում իրավաբանական անձանց վարկերն աճել են 29.2%-ով, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը՝ 24.8%-ով: Վերջիններիս նպաստումները կազմել են համապատասխանաբար 14.7 և 12.3 տոկոսային կետ:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁹




2025թ. հոկտեմբերին բոլոր ոլորտներին տրամադրված վարկերն աճել են՝ դրականորեն նպաստելով վարկերի ընդհանուր ծավալի աճին: Առավել նշանակալի

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

են եղել սպառողական (աճը՝ 31.6%) և հիպոթեքային (աճը՝ 21.8%) վարկերի աճերը: Վերջիններս ընդհանուր վարկերի աճին նպաստել են համապատասխանաբար 7.0 և 4.8 տոկոսային կետով:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) հուլիս-սեպտեմբեր ամիսներին աճել է: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2025թ. սեպտեմբերին կազմել է 136.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով շուրջ 40%-ով: Արդյունքում, հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ դրամական միջոցների զուտ ներհոսքն աճել է՝ 15.5%-ով՝ կազմելով 1,025.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների 888.0 մլն ԱՄՆ դոլարի համեմատ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը վերջին ամիսներին արագանում է՝ հիմնականում արդյունաբերության վերականգնման արդյունքում: Ընթացիկ տարվա հոկտեմբերին ՏԱՑ-ը կազմել է 10.1%, իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների կուտակային ցուցանիշը կազմել է 8.1%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ արագանալով 0.4 տոկոսային կետով: Աճի տեմպի

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2025թ. հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

արագացումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության ոլորտի վերականգմամբ, որը, սակայն, ունի ոչ կայուն կառուցվածք:

2. Արդյունաբերության աճի տեմպը, թեև արագանում է, սակայն դրա հիմքում ընկած գործոնները մնում են անկայուն: Արդյունաբերության ոլորտի ենթաճյուղերի աճի տեմպերը էականորեն տատանվել են վերջին ամիսների ընթացքում: Այսպես, սննդամթերքի արտադրության աճը սեպտեմբերին կազմել է 20.4%, այն դեպքում, երբ օգոստոսին այդ նույն ենթաոլորտում գրանցվել էր 4.8% անկում: Ծխախոտի արտադրության աճի տեմպը ևս էականորեն արագացել է՝ օգոստոսի 17.1%-ից սեպտեմբերին հասնելով 32.4%-ի: Իսկ հիմնային մետաղների արտադրության աճի տեմպն էականորեն դանդաղել է՝ 77.1%-ից դառնալով 17.0%: Մշակող արդյունաբերության աճի կառուցվածքի այսքան տատանողական լինելը հուշում է մեկանգամյա կարճաժամկետ գործոնների առկայության և դրանց մեծ ազդեցությունների մասին: Այդ պայմաններում բարձր աճերի տեմպերը կարող են երկար չպահպանվել:

3. Արտահանման անկման տեմպերի բարելավումը բավական դանդաղ է ընթանում: Արտահանման անկումը ընթացիկ տարվա հունվար-հոկտեմբերին կազմել է 44.7% և հունվար-սեպտեմբերի համեմատ բարելավվել է ընդամենը 2.0 տոկոսային կետով: Բարելավման տեմպը բավական դանդաղ է, և եթե հաշվի առնենք նաև այն, որ վերաարտահանման հիմնական ազդեցությունները հաշվարկներից չեզոքացնելու դեպքում արտահանման աճը մնում է ցածր մակարդակում, ապա կարող ենք եզրակացնել, որ տնտեսության արտահանելի ոլորտում դեռևս պահպանվում են խորքային խնդիրները:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: